

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2011 թվականի N 350-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ
(ԿՏՐՈՆԻՆ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի դիմային կողմի գծապատկերը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի հակառակ կողմի գծապատկերը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո որոշմամբ հաստատված կարգով նախատեսված վճարումների համար ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում համապատասխան կուտակային հաշվի բացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունիսի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2011 թ. ապրիլի 11
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 31-ի N 350-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ
ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանությունում (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) հաշվառված, ինչպես նաև նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա մեխանիկական ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների (Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ չհամարվող տրանսպորտային միջոցները, այսուհետ՝ տրանսպորտային միջոցներ) պարտադիր տեխնիկական զննության անցկացման կարգը:

2. Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննությունը (այսուհետ՝ տեխնիկական զննություն) իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում (այսուհետ՝ տեխնիկական զննության կայան)՝ տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ:

3. Տեխնիկական զննություն իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություններ) լիցենզավորումը և լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(3-րդ կետը փոփ. 13.12.18 N 1434-Ն)

4. Տեխնիկական զննությունն իրականացվում է վճարովի հիմունքով՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սակագնով:

II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Տեխնիկական զննության հիմնական խնդիրներն են՝

1) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերի, կանոնների, ստանդարտների և տեխնիկական նորմերի պահանջներին, ինչպես նաև վնասակար նյութերի մթնոլորտ արտանետման տեխնիկական նորմատիվներին տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և կահավորանքի համապատասխանության ապահովումը.

2) շահագործման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների կառուցվածքում ինքնակամ և երթևեկության անվտանգությանն սպառնացող փոփոխությունների կատարման կանխումը.

3) առևանգված, ինչպես նաև հետախուզվող և ոստիկանության կողմից որոնվող տրանսպորտային միջոցների հայտնաբերումը.

4) տեխնիկական զննության անցկացման արդյունքների մասին համապատասխան կառավարման մարմիններում տեղեկատվական բազայի ձևավորումն ու վարումը՝ նրանց կողմից սահմանվող կարգով:

6. Տեխնիկական զննությունն իրականացվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ անկախ տրանսպորտային միջոցների հաշվառման վայրից:

7. Տրանսպորտային միջոցները ենթակա են տեխնիկական զննության՝ օրենքով սահմանված պարբերականությամբ:

8. Սեփականատերերը կամ սեփականատիրոջ ներկայացուցիչները (այսուհետ՝ տիրապետող) իրավունք ունեն տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության ներկայացնելու նախորդ տեխնիկական զննության ժամանակ սահմանված ժամկետից շուտ:

9. Հաջորդ տեխնիկական զննության ժամկետը հաշվարկվում է վերջին տեխնիկական զննության անցկացման օրվանից:

III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

(վերնագիրը խմբ. 19.11.14 N 1293-Ն)

10. Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար տիրապետողը բանկերին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝

1) տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը (հաշվառման վկայագիրը) կամ տեխնիկական կտրոնը, իսկ նոր ներմուծված և ճանապարհային ուստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ՝ տրանսպորտային միջոցի մաքսային փաստաթղթերը.

2) մեխանիկական տրանսպորտային միջոցների գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը կամ պարտքերի չափի վերաբերյալ տեղեկանքը՝ բանկում համապատասխան վճարում կատարելու նպատակով: Նոր ներմուծված և ճանապարհային ուստիկանությունում մշտական հաշվառման ենթակա մեխանիկական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ գույքահարկի պարտավորությունների կատարման մասին տեղեկանքը չի ներկայացվում:

10.1. Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար վճարումները կարող են կատարվել նաև պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով՝ բացառությամբ նոր ներմուծված և ճանապարհային ուստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների: Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար տիրապետողը պետական վճարումների էլեկտրոնային համակարգ է մուտքագրում տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը և տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի համարը, որից հետո տվյալների ընդհանուր բազայից համակարգը տեղեկատվություն է գեներացնում՝ տրանսպորտային միջոցի տեսակի, արտադրման տարեթվի, շարժիչի հզորության, գույքի հաշվառման համարի, սեփականատիրոջ, հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) կամ հանրային ծառայությունների հաշվեհամարի (ՀԾՀ) (առկայության դեպքում) և վճարման ենթակա պարտավորությունների մասին: Տեղեկատվությունը տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի հետ համեմատելուց հետո համընկնման դեպքում տիրապետողը մուտքագրում է բնակության (առաքման), էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

(10.1-ին կետը լրաց. 19.11.14 N 1293-Ն)

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերի համապատասխան տվյալների գրանցումից հետո սույն կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթուղթը տիրապետողին չի վերադարձվում:

12. Տեխնիկական զննություն անցկացնելու համար տիրապետողը տեխնիկական զննության կայան է ներկայացնում տրանսպորտային միջոցը և հետևյալ փաստաթղթերը՝

1) տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը (հաշվառման վկայագիրը) կամ տեխնիկական կտրոնը, իսկ նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ՝ տրանսպորտային միջոցի մաքսային փաստաթղթերը.

2) բանկերի կողմից տիրապետողին տրված կտրոնի 2-րդ հատվածը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված 20-նիշանոց ծածկագիրը.

3) հատուկ լուսային և ձայնային ազդանշաններով տրանսպորտային միջոցի կահավորման վերաբերյալ փաստաթղթերը՝ ճանապարհային ոստիկանությունում համապատասխան գրառմամբ (դրոշմակնիքով), եթե տրանսպորտային միջոցը կահավորված է այդպիսի միջոցներով.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» N 2388-Ն որոշմամբ սահմանված՝ անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության կամ ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման մասին վկայականը (համաձայն սույն կարգի NN 2 կամ 3 ձևերի), ինչպես նաև տրանսպորտային միջոցի կառուցվածքում երթևեկության անվտանգության վրա ազդող փոփոխությունների օրինականությունը հավաստող փաստաթղթերը՝ բացառությամբ նոր ներմուծվողների:

(12-րդ կետը լրաց. 19.11.14 N 1293-Ն)

13. Տեխնիկական զննություն անցկացնելու համար տիրապետողը տեխնիկական զննության կայան է ներկայացնում սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակները, իսկ սույն կարգի 12-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը՝ նաև պատճենների տեսքով: Ներկայացված փաստաթղթերի համապատասխան տվյալների գրանցումից և պատճենների հետ համեմատումից հետո վերադարձվում են տիրապետողին՝ բացառությամբ սույն կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթի:

14. Բանկերի և տեխնիկական զննության կայանների կողմից չեն ընդունվում մատիտով լրացված կամ ջնջումներ, բացթողումներ, ինչպես նաև հաստատում չունեցող՝ ուղղումներ պարունակող փաստաթղթերը:

15. Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար տիրապետողն սպասարկող բանկերում կատարում է հետևյալ վճարումները՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկը՝

ա. առաջին տեխնիկական զննություն անցնելու դեպքում վճարվում է մինչև առաջին տեխնիկական զննությունը, իսկ տարեկան տեխնիկական զննություն անցնելու դեպքում՝ մինչև տարեկան տեխնիկական զննությունը,

բ. երկու հարկային տարվա ընթացքում մեկ տեխնիկական զննություն անցնելու դեպքում՝ բնապահպանական հարկի տարեկան գումարի կրկնապատիկի չափով վճարվում է մինչև յուրաքանչյուր տեխնիկական զննությունը.

2) համապատասխան տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության անցկացման համար նախատեսված ծառայության վճարը, որը բանկի կողմից փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում բացված համապատասխան կուտակային հաշվին.

3) օրենքով սահմանված կարգով նախատեսված պետական տուրքը, որը բանկի կողմից փոխանցվում է պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին.

4) համապատասխան տրանսպորտային միջոցի (միջոցների) համար հաշվարկված գույքահարկը՝ գույքահարկի պարտավորության չափի վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որը բանկի կողմից փոխանցվում է համապատասխան համայնքի բյուջե:

(15-րդ կետը խմբ. 27.03.14 N 322-Ն, 17.01.19 N 14-Ն)

15.1. Տիրապետողը սույն կարգի 10.1-ին կետով սահմանված տեղեկատվությունը մուտքագրելուց հետո պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով կատարում է գույքահարկի, տեխնիկական զննության համար նախատեսված ծառայության վճարի, պետական տուրքի, բնապահպանական հարկի, ինչպես նաև փոստային ծառայության համար սահմանված վճարումները:

(15.1-ին կետը լրաց. 19.11.14 N 1293-Ն, փոփ. 17.01.19 N 14-Ն)

IV. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ

16. Տեխնիկական զննության կայաններում տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ և զննման միջոցով ստուգվում է տրանսպորտային միջոցների համապատասխանությունը շահագործման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և դրանց լրացուցիչ սարքավորումների կառուցվածքին ու տեխնիկական վիճակին պահանջներ ներկայացնող՝ սույն կարգի N 1 ցանկում նշված նորմատիվ իրավական ակտերի, կանոնների, ստանդարտների և տեխնիկական նորմերի պահանջներին (այսուհետ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներ):

17. Տեխնիկական զննության կայաններում կատարվում են տրանսպորտային միջոցների՝ սույն կարգի N 2 ցանկում նշված հանգույցների ու համակարգերի տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքները:

18. Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցները պետք է ունենան համապատասխանության սերտիֆիկատ և ապահովեն համապատասխան ստանդարտներով ու տեխնիկական նորմերով սահմանված ճշտությամբ չափումների կատարումը:

19. Տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման ժամանակ օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների ցանկը և դրանց հիմնական տեխնիկական բնութագրերը ներկայացված են սույն կարգի N 3 ցանկում:

20. Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներին և մնացած պարամետրերի անհամապատասխանության դեպքում արատորոշման քարտում կատարվում է նշում, և տրանսպորտային միջոցները տնօրինողները զգուշացվում են դրանց անհապաղ վերացման մասին, որի համար վերջիններս ստորագրում են արատորոշման քարտում:

21. Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջները չբավարարած և անսարք համարված տրանսպորտային միջոցի կրկնակի զննությունը տեխնիկական զննությունից հետո 20 օրվա ընթացքում իրականացվելու դեպքում տիրապետողը համապատասխան արատորոշման քարտը ներկայացնում է տեխնիկական զննության կայան, և տեխնիկական վիճակն ստուգվում է միայն այն ցուցանիշների գծով, որոնք հիմք են հանդիսացել նախորդ զննության ժամանակ արձանագրված անհամապատասխանությունների համար:

22. Երբ տեխնիկական զննության ընթացքում տրանսպորտային միջոցի համարակիր ագրեգատների համարների դաջվածքներում կամ հաշվառման փաստաթղթերում հայտնաբերվում են ակնհայտ կեղծիքների փաստեր, ապա տեխնիկական զննության կայանի հսկիչը դրա մասին անհապաղ տեղեկացնում է տեխնիկական զննության կայանի ղեկավարին, իսկ վերջինս էլ հայտնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

V. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Տեխնիկական վիճակի ստուգման արդյունքի հիման վրա համակարգչի միջոցով ձևակերպվում է տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության արատորոշման N 1 ձևի քարտը (այսուհետ՝ արատորոշման քարտ):

24. Արատորոշման քարտերի լրացման համակարգչային ծրագրային ապահովումը՝ քարտում բոլոր տվյալները լրացնելուց և հսկիչի էլեկտրոնային ստորագրությունը դնելուց ու համապատասխան հրահանգով աշխատանքների ավարտը հաստատելուց հետո բացառվում է որևէ անձի կողմից քարտում փոփոխությունների կատարումը:

25. Սույն կարգին համապատասխան կազմված արատորոշման քարտերը չեն կարող հանվել համակարգչի հիշողությունից՝ մինչև հաջորդ տեխնիկական զննության ավարտը:

26. Արատորոշման քարտը տպվում է նաև թղթային կրիչի վրա՝ երկու օրինակից: Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հսկիչի և տրանսպորտային միջոցը տիրապետողի կողմից ստորագրվելուց հետո արատորոշման քարտի առաջին օրինակը հանձնվում է տրանսպորտային միջոցը տիրապետողին, երկրորդը պահվում է տեխնիկական զննության կայանում, որը

համարվում է խիստ հաշվառման փաստաթուղթ և պահպանվում է մինչև հաջորդ տարվա տեխնիկական գննության ժամկետի ավարտը:

(26-րդ կետը փոփ. 24.11.11 N 1666-Ն)

27. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց և սույն կարգի 15-րդ կետով սահմանված վճարումներն իրականացնելուց հետո սպասարկող բանկի կողմից լրացվում և տիրապետողին է տրամադրվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ձևի տեխնիկական գննության կտրոն: Տեխնիկական գննության կտրոնի դիմային մասի քառակուսի վանդակում փակցվում է հաջորդ տեխնիկական գննության անցկացման ամիսը նշող՝ հռոմեական թվերով նշված հերթական համարը:

27.1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով սույն կարգի 15.1-ին կետին համապատասխան վճարումներն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում լրացնում և տիրապետողի կողմից նշված հասցեով՝ փոստային ծառայության միջոցով, առաքում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ձևի տեխնիկական գննության կտրոն: Տեխնիկական գննության կտրոնի դիմային մասի քառակուսի վանդակում փակցվում է հաջորդ տեխնիկական գննության անցկացման ամիսը նշող՝ հռոմեական թվերով նշված հերթական համարը:

(27.1-ին կետը լրաց. 19.11.14 N 1293-Ն, փոփ. 13.12.18 N 1434-Ն)

27.2. Նշված հասցեում տիրապետողի բացակայության դեպքում փոստային ծառայության կողմից տասնօրյա ժամկետում տեխնիկական գննության կտրոնը կրկին առաքվում է: Երկրորդ անգամ բացակայության դեպքում՝ տիրապետողն այնուհետ տեխնիկական գննության կտրոնը կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից:

(27.2-րդ կետը լրաց. 19.11.14 N 1293-Ն, փոփ. 13.12.18 N 1434-Ն)

28. Տեխնիկական գննության կտրոնը կորցնելու կամ ոչ պիտանի դառնալու դեպքերում տիրապետողի դիմումի համաձայն բանկն ստուգում է տեխնիկական գննության կտրոնի՝ նախկինում տրամադրված լինելու փաստը: Տեխնիկական գննություն անցնելու փաստը հաստատվելու և սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետում և 14-րդ կետում նշված դրույթների կատարման դեպքում ձևակերպվում և տրվում է տեխնիկական գննության կտրոնի կրկնօրինակ: Այս դեպքում հաջորդ տեխնիկական գննության ներկայացման ժամկետը չի փոխվում: Տեխնիկական գննության կտրոնի «Հատուկ նշումներ» տողում կատարվում է

«Կրկնօրինակ» նշումը: Տեխնիկական զննություն անցնելու փաստը չհաստատվելու դեպքում այն կատարվում է սույն կարգի պահանջներին համապատասխան:

VI. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

29. Տեխնիկական զննության արդյունքում տեխնիկական զննության կայանները համակարգչի միջոցով գրանցամատյանում կատարում են տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցների հաշվառում:

30. Տրանսպորտային միջոցի արատորոշման քարտում նշված բոլոր տվյալները, կառուցվածքային ու հարմարադասման մեջ կատարված փոփոխությունների մասին լրացուցիչ տեղեկությունները և տրանսպորտային միջոցի ստուգման արձանագրությունները գրանցվում են տեխնիկական զննության կայանի համակարգչում՝ գրանցամատյանի տեսքով, որի տվյալները տրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունից անմիջապես հետո կայանների համակարգչային ցանցի միջոցով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության սերվերին՝ վերահսկողական աշխատանքներ իրականացնելու, արտակարգ իրավիճակներում բնակչության և տնտեսության տրանսպորտային սպասարկումը պլանավորելու և կազմակերպելու նպատակով, ինչպես նաև կանոնավոր ուղևորափոխադրումների մրցույթին ներկայացված տվյալների փոփոխությունը պարզելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

(30-րդ կետը փոփ. 13.12.18 N 1434-Ն)

31. Տեխնիկական զննության կայանների համակարգչային ցանցից կարող է օգտվել ճանապարհային ոստիկանությունը, որն օրենքով սահմանված դեպքերում կարող է ստուգել տեխնիկական զննության ընթացքը՝ հետախուզման մեջ գտնվող՝ տրանսպորտային միջոցների, դրանց ագրեգատների հայտնաբերման նպատակով:

32. Տրանսպորտային միջոցների առկայության ու դրանց տեխնիկական վիճակի տվյալների գրանցամատյանի ձևը և դրա վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարը:

(32-րդ կետը փոփ. 13.12.18 N 1434-Ն)

33. Տեխնիկական զննության կտրոնները համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր և պահպանվում ու օգտագործվում են դրանց համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Տրանսպորտային միջոցների առկայության ու դրանց տեխնիկական վիճակի տվյալների գրանցամատյանում նշվող տեղեկությունները ծառայողական օգտագործման համար են և հրապարակման ենթակա չեն՝ բացառությամբ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերի:

35. Տեխնիկական զննության համար սույն կարգի 15.1-ին կետով սահմանված վճարումները կարող են կատարել նաև Հայաստանի Հանրապետության պետական վճարումների էլեկտրոնային համակարգում ներառված համայնքներում հաշվառված տեխնիկական միջոցների տիրապետողները:

(35-րդ կետը լրաց. 19.11.14 N 1293-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Ց Ա Ն Կ N 1

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԿԱՆՈՆՆԵՐԻ, ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ

1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշում

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոմոբիլների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» N 2388-Ն որոշում

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տրանսպորտային միջոցների պետական տեխնիկական զննության անցկացման և դրանց դեղին հիմնագույնի համարանիշների հատկացման կարգը հաստատելու մասին» N 32-Ն որոշում

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Կարմիր, կապույտ, դեղին (նարնջագույն), լուսնասպիտակ առկայծող փարոսիկներով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցների ցանկը հաստատելու մասին» N 2329-Ն որոշում

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 16-ի «Ավտոտրանսպորտային միջոցների պետական գրանցման առանձնահատուկ համարանիշների և հատուկ ազդանշանների օգտագործումը կանոնակարգելու մասին» N 367 որոշում

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի «Տրանսպորտային միջոցներում գովազդի տեղադրման կարգը հաստատելու մասին» N 2137-Ն որոշում

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող՝ ոստիկանության կողմից հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 1566-Ն որոշում

9. ՀUS-185-2006 օպերատիվ ծառայությունների ավտոմեքենաներ, ավտոբուսներ և մոտոցիկլետներ. Գունագծապատկերներ, ճանաչման նշաններ, մակագրություններ, լուսային և ձայնային հատուկ ազդանշաններ. Ընդհանուր պահանջներ (հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի հունիսի 29-ի N 146 հրամանով)

10. ՀUS-110-2006 տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ և շահագործման վերաբերյալ ցուցումներ (հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի N 246-Ա հրամանով)

11. ГОСТ Р 51709-2001 «Автотранспортные средства. Требования безопасности к техническому состоянию и методы проверки»

12. ГОСТ 5727-88 «Стекло безопасное для наземного транспорта. Технические требования»

Ց Ա Ն Կ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Ազդեգատների, հանգույցների, համակարգերի և աշխատանքների անվանումները	Դիրքը՝ ըստ արատ- որոշման քարտի
Արգելակային համակարգ		
1.	Արգելակային ստենդի վրա փորձարկման ժամանակ տրանսպորտային միջոցի արգելակման արդյունավետության և կայունության ստուգում, այդ թվում՝ 1) բանվորական արգելակային համակարգի տեսակարար արգելակման ուժերի որոշում 2) անիվների արգելակային ուժերի անհավասարաչափության գործակցի որոշում 3) կայանման արգելակային համակարգի տեսակարար արգելակման ուժի որոշում 4) բանվորական արգելակային համակարգի գործարկման ժամանակի որոշում 5) օժանդակ արգելակային համակարգի աշխատունակության ստուգում	101 103 102 111 113
2.	Ճանապարհային փորձարկման ժամանակ տրանսպորտային միջոցի արգելակման արդյունավետության և կայունության ստուգում այդ թվում՝ 1) արգելակման ճանապարհի երկարության չափում 2) կայունացված դանդաղեցման մեծության չափում 3) արգելակման ժամանակ շարժման ուղղությունից տրանսպորտային միջոցի գծային շեղման առկայության ստուգում 4) թեքության վրա կայանման արգելակային համակարգը պահելու ունակության ստուգում 5) օժանդակ արգելակային համակարգի աշխատունակության ստուգում	104 105 112 106 113
3.	Պնևմատիկ արգելակային շարժաբերի հերմետիկության ստուգում	107
4.	Հիդրավլիկ արգելակային շարժաբերի հերմետիկության ստուգում	108
5.	Ազդանշանման համակարգի և ճնշաչափի աշխատունակության ստուգում	109
6.	Արգելակային համակարգի տարրերի տեխնիկական վիճակի ստուգում	113
7.	Տրանսպորտային միջոցի կառուցվածքին արգելակային համակարգի և դրա տարրերի համապատասխանության ստուգում	114
Ղեկային կառավարում		
1.	Ղեկանիվի առավելագույն շրջադարձի անկյան և ղեկային վարման գումարային խաղի մեծության չափում	201
2.	Ղեկային կառավարման դետալների փոխադարձ տեղաշարժի և խաղի առկայության ու պարուրակային միացությունների սևեռման հուսալիության ստուգում	202
3.	Ղեկային կառավարման ուժեղարարի տեխնիկական վիճակի և աշխատունակության ստուգում	203
4.	Ղեկային կառավարման տարրերի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում	204

Արտաքին լուսավորման սարքեր		
1.	Ներկայացվող պահանջներին արտաքին լուսավորման սարքերի քանակի, տեսակի, դասավորության, վիճակի և գույնի համապատասխանության ու սահմանված ռեժիմում դրանց աշխատունակության ստուգում այդ թվում՝	
	1) հեռահար և մոտակա լույսի լապտերների	301
	2) առջևի և հետևի հակամառախուղային լապտերների	302
	3) արգելակման ազդանշանների	303
	4) եզրաչափային լույսերի	304
	5) շրջադարձի ցուցիչների և վթարային ազդարարիչների	305
	6) հետընթացի լույսերի	307
	7) գրանցման համարանիշի լուսավորման լապտերիկի	306
	8) լուսային անդրադարձիչների	308
	9) ավտոգնացքի նշանների	309
	10) հեռահար և մոտակա լույսի լապտերների ու հակամառախուղային լապտերների լույսի ուժի ստուգում	301
		302
Հողմապակու ապակեմաքրիչներ և ապակեվազներ		
1.	Հողմապակու ապակեմաքրիչների և ողողիչների վիճակի և սահմանված ռեժիմում դրանց աշխատունակության ստուգում այդ թվում՝	
	1) ապակեմաքրիչների	401
	2) ապակեվազների	402
Անիվներ և դողեր		
1.	Դողերի մակնիշավորմանը և տրանսպորտային միջոցի կառուցվածքին, չափին և թույլատրելի բեռնվածքին դրանց համապատասխանության ու տեխնիկական վիճակի ստուգում այդ թվում՝	
	1) պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության	501
	2) դողերի վնասվածքի առկայության	502
	3) անիվների տեղակայման	503
	4) անվահեծերի և սկավառակների ամրակապման ու վիճակի	504
Շարժիչը և դրա համակարգերը		
1.	Բենզինային և գազաբալոնային շարժիչի բանաձև գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի՝ CO, և ածխաջրածինների՝ CH) պարունակության ստուգում	601
2.	Դիզելային շարժիչի ծխայնության ստուգում	602
3.	Սնման համակարգի սարքերի և խողովակաշարերի հերմետիկության ստուգում	603
4.	Չեզոքացուցիչների առկայության և սարքինության բանաձև գազերի արտածման համակարգի համալրվածության և այրվածքների, մեխանիկական ծակվածքների ու անկիպությունների առկայության ստուգում	604
Կառուցվածքի այլ տարրեր		
1.	Պետական գրանցման համարանիշների տեղի համապատասխանությունը տեխնիկական պայմանների պահանջներին և ամրացման հուսալիության ստուգում	701
2.	Տրանսպորտային միջոցի և դրա ագրեգատների մականշվածքների համապատասխանությունը տեխնիկական անձնագրի տվյալներին և դրանց փոփոխման առկայությունը	702
3.	Հետին տեսանելիության հայելիների առկայության, դրանց վիճակի և ամրակապման ստուգում	703
4.	Չայնային ազդանշանի աշխատունակության ստուգում	704
5.	Ապակիների վիճակի (տեսանելիության), վարորդի նստատեղից տեսանելիությունը սահմանափակող լրացուցիչ իրերի առկայության ստուգում	705
6.	Վազաչափի, պտուտաչափի և այլ չափիչ սարքերի սարքինության ստուգում	706
7.	Կախոցքի և կարդանային փոխանցման տարրերի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում	707

8.	Վարորդի և ուղևորների նստարանների կարգավորման մեխանիզմի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում	708
9.	Ղռների կողպեքների, կողերի փականների, ցիստեռների բկանցքերի աշխատունակության ստուգում	709
10.	Ղռների կառավարման շարժաբերի աշխատունակության ստուգում	710
11.	Ավտոբուսների սրահներից վթարային ելքերի աշխատունակության, դրանց ցուցիչների և օգտագործման կարգի վերաբերյալ ցուցումների առկայության ստուգում	711
12.	Ապակիների տաքացման և փչահարման սարքերի աշխատունակության ստուգում	712
13.	Հետին պաշտպանիչ սարքվածքի, ցեխապաշտպանիչ զոզնոցների ու ցայտապաշտպանիչների առկայության, դրանց ամրակապման և վիճակի ստուգում	713
14.	Կցանքային հարմարանքի տեխնիկական վիճակի, սարքինության և տարրերի ամրակապման հուսալիության ստուգում	714
15.	Բժշկական դեղատուփի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի առկայության ստուգում	715
16.	Հակահետզլորման հենակների առկայության ստուգում	716
17.	Անվտանգության գոտիների առկայության և աշխատունակության ստուգում	717
18.	Տեխնիկական նորմատիվների և ստանդարտների պահանջներին օպերատիվ և հատուկ ծառայությունների տրանսպորտային միջոցների գունագրաֆիկ ներկվածքի, հատուկ ծայնային և լուսային ազդանշանների համապատասխանության ստուգում	718
<i>Այլ աշխատանքներ</i>		
1.	Տրանսպորտային միջոցի կառուցվածքում փոփոխությունների առկայության և դրանց վերաբերյալ համապատասխան մարմինների թույլտվության կամ համաձայնության առկայության ստուգում	801
2.	Մեծ եզրաչափեր ունեցող և ծանրաքաշ բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների մոտ ապահովիչ հարմարանքների, լրացուցիչ հայելիների տարբերիչ նշանների, առկայծող փարոսիկների առկայության ստուգում	802
3.	Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների մոտ տարբերիչ նշանների և փոխադրման անվտանգության պահանջներով նախատեսված այլ սարքերի առկայության, դրանց աշխատունակության և ամրացման հուսալիության ստուգում	803
4.	Մասնագիտացված տրանսպորտային միջոցների մոտ բեռի ամրացման հարմարանքի, հատուկ թափքերի, ցիստեռների և այլ սարքավորումների տեխնիկական վիճակի, աշխատունակության և հուսալիության ստուգում	804
